ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/34171-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-199-20.06.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 958 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-199-20.06.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է՝

1) ծառայության ընթացքում փոխհատուցել զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված բոլոր վնասները (այդ թվում՝ ոչ մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասը).

2) օրենքի կարգավորման առարկան սահմանել մարտական գործողությունների հետևանքով կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ՝ ներառյալ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը.

3) որպես օրենքի կիրառման դեպք համարել նաև առողջական վիճակի վատթարացումը:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ» եզրույթը ներառում է նաև Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը և այդ կապակցությամբ օրենքում հատուկ նշումը ճիշտ չէ ու անընդունելի է: Միաժամանակ, փաստացի առաջարկվում է կարգավորման առարկայից հանել հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ տեղի ունեցած դեպքերով հատուցման տրամադրումը, ինչը ևս ընդունելի չէ:

Ինչ վերաբերում է առողջական վիճակի վատթարացումը որպես հասցված վնասի հանգամանք (դեպք) սահմանելու առաջարկությանը, ապա դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ օրենքը վնասների հատուցում է նախատեսում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ստանալու դեպքում, որոնք առաջացել են վնասվածքի կամ խեղման հետևանքով՝ առանց տարանջա-տում դնելու, թե ժամանակային առումով երբ կամ ինչ պատճառով են առաջացել այդ վնաս-վածքը կամ խեղումը:

Ամփոփելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ: Հայտնում ենք նաև, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն և 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշումներում:

18 հուլիսի 2019 թվականի N 958 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջու-թյանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Խ-199-20.06.2019-ՊԱ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 18

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-199-20.06.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենքե) 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետեւանքով, Հայաստանի Հանրապետության, ներառյալ՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանվում են հատուցման հիմնադրամի ստեղծման եւ գործունեության կարգն ու պայմանները:ե:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝

ա) 1-ին մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Սույն օրենքի համաձայն՝ շահառուներ են համարվում այն զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետեւանքով կամ Հայաստանի Հանրապետության, ներառյալ՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության պաշտպանության ժամանակ:ե,

բ) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հատուցման դեպք (այսուհետ՝ Հատուցման դեպք) է համարվում 2017 թվականի հունվարի 1-ից հետո տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության, ներառյալ՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելը:ե:

գ) նույն մասի 2-րդ եւ 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) զինծառայողը մարտական գործողությունների կամ Հայաստանի Հանրապետության, ներառյալ՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության պաշտպանության ժամանակ անհայտ կորելու հետեւանքով օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող, եւ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անցել է վեց ամիս, եթե մինչեւ հատուցման գումար վճարելու սկիզբը զինծառայողը չի հայտնաբերվել, կամ

3) զինծառայողը մարտական գործողությունների կամ Հայաստանի Հանրապետության, ներառյալ՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության պաշտպանության ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետեւանքով ստացել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն:ե:

դ) 6-րդ մասում «հաշմանդամ դառնալը» բառերը փոխարինել «հաշմանդամություն ստանալը» բառերով, որոնցից հետո մասը լրացնել «կամ առողջական վիճակի վատթարացումնե բառերով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի կամ առողջական վիճակի վատթարացման հետեւանքով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ փոխհատուցելու ծառայության ընթացքում զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված բոլոր վնասները: Սակայն միայն մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ տուժած զինծառայողների մասով է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամե) կատարում փոխհատուցումներ:

Ըստ այդմ՝ առաջարկվում է զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված բոլոր վնասները (այդ թվում՝ ոչ մարտական գործողությունների ժամանակ, բացառությամբ՝ իր կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետեւանքով ստացված վնասը) հատուցել Հիմնադրամի միջոցների հաշվին, քանի որ դա լիովին համապատասխանում է թե՛ Հիմնադրամի ստեղծման, թե՛ իրավական ակտի նպատակին, ինչպես նաեւ, ըստ հրապարակված տվյալների, Հիմնադրամը տիրապետում է համապատասպան ֆինանսական ռեսուրսներին: